ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

ՆՈՐ ԴԱՐԻ ՍԵՄԻՆ

Թե կարենայի ես քո մեջ կերտել
Նոր մարդն աշխարհի, տիպով երկնային,
Նրան կանեի ես անհիշաչար,
Վեհհոգի, ներող, խոնարհ ու զիջող,
Մարդ՝ ազնիվ, բարի, երբեք չարակամ,
Մարդ՝ ընկերասեր, զոհվող, բարեկամ:

Թեև ես էլ եմ հաճախ շատ հեռու
Կերպից կատարյալ, վեհ, աստվածային,
Ես ինձնից դժգոհ, հենց դրա համար
Ուզում եմ կերտել մարդն աստվածային:

Գուցե լինեի մի ճարտարապետ
Եվ կամ թե հմուտ մի քանդակագործ,
Փոխան սև կավի ձեռքով շաղեի
Մարդկանց արժանիքն ու առաքինին
Եվ կարենայի դրանցով կերտել
Նոր մարդն աշխարհի, գալիք նոր դարի:

Գուցե լինեի հոգու, էության
Մի ճարտարապետ: Գեղակերտեի
Մի նկարագիր, անբիծ, մնայուն:
Լույսով ես անշեջ այն զարդարեի,
Տեսիլք և թռիչք, անսահման հույսի
Ակունք բացեի նոր մարդու հոգում:

Թող լիներ նոր մարդը վեհանձն ու ազնիվ,
Նենգություն և դավ սրտում չլիներ,
Հոգին վերածվեր մարմնի արտաքին,
Լիներ այն մաքուր, զուլալ, կաթոգին:

Եվ հոգու վրա նոր դարի մարդկանց,
Չլիներ դրված անցյալից սև բիծ:

23.12.1996